# Ի ՏԵՐ ՀԱՆԳՅԱՎ
# Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ

Ցավով տեղեկացնում ենք, որ դեկտեմբերի 9-ին Երևանում, ուղեղի կաթվածից, ի Տեր հանգյավ Իրաքի հայոց թեմի սպասավոր Տ. Գարեգին ավագ քահանա Հովսեփյանը: Դեկտեմբերի 14-ին, ժամը 10.30-ին, Ս. Շողակաթ վանքում հրնթացս Ս. Պատարագի կատարվեցին հանգուցյալ Տեր Հոր վերջին օծման և հուղարկավորության արարողությունները: Հոգելույս Տեր Գարեգինի մարմինը կամփոփվի միաբանական գերեզմանատանը:

* * *

Տ. Գարեգին ավագ քահանա Հովսեփյանը (ավազանի անունով՝ Հովսեփ) ծնվել է 1928 թ. Իրաքի հյուսիսային շրջանի քրդական Զախո սահմանամերձ գյուղաքաղաքում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, ապա 1944 թ. տեղափոխվել է Մուսուլ և կրթությունը շարունակել տեղի Ազգային վարժարանում՝ միաժամանակ ծառայելով Մուսուլի Ս. Էջմիածին եկեղեցում: 1970 թ. ընտանիքով տեղափոխվել է Բաղդադ, ուր 1970 թ. սկսած սպասավորել է առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում: 1978 թ. Տ. Պսակ արքեպիսկոպոս Թումայանի կողմից ձեռնադրվել է սարկավագ: 1984 թ., Երևման Ս. Խաչի տոնին, ձեռամբ Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյանի, ձեռնադրվել է քահանա: 1985 թ. սպասավորել է Բասրայի Ս. Աստվածածին եկեղեցում, իսկ 1986 թ. սկսած մինչև իր վախճանը եղել է Մուսուլի Ս. Էջմիածին եկեղեցու հոգևոր հովիվը: Իր բազմամյա հովվության ընթացքում Արժանապատիվ Տեր Հայրը վայելել է ինչպես իր հոգևոր հոտի և լծակից հոգևոր եղբայրների սերն ու հարգանքը, այնպես էլ քույր Եկեղեցիների հոգևորականության համակրանքը: Նվիրյալ և վաստակաշատ ծառայության համար Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Տ. Գարեգին ավագ քահանա Հովսեփյանին 2000 թ. շնորհել է ծաղկյա փիլոն կրելու իրավունք, իսկ 2004 թ.՝ ավագության պատիվ:

**«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:**

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*